Քաղվածք

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի որոշումից

Երևան, 25 դեկտեմբերի 2019թ.

ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը 2019թ. դեկտեմբերի 25-ի նիստում քննարկեց դատախազ Հ. Մ.-ին արտահերթ կարգով դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազի առաջարկությունը:

Հաշվի առնելով հարցազրույցի արդյունքները և ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 4-րդ մասով, ՀՀ գլխավոր դատախազի 2018թ. ապրիլի 27-ի թիվ 45 հրամանի հավելվածի 7-րդ կետի 12-րդ ենթակետով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ՝

Դրական եզրակացություն ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ Հ. Մ.-ին «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու համար: